

<https://doi.org/10.46991/hc.2022.18.2.150>

## On the Question of the Semantic-Functional Relationship between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian

Sargis Avetyan

<https://orcid.org/0000-0001-9474-7129>

*Candidate in Philology, Associate Professor at the Chair of the History of the Armenian Language and General Linguistics, YSU*  
sargisavetyan@ysu.am

**Key Words:** the present subjunctive, the aorist subjunctive, Classical Armenian, a mood contrast, an aspect-mood contrast, an aspectual contrast, contextual-semantic analysis, syntactic functions, imperfective – perfective.

*It is argued that attempts to characterize the semantic relationship between the two forms of the Subjunctive (the present subjunctive and the aorist subjunctive) in Classical Armenian as either a mood contrast or an aspect-mood contrast are not backed up by the relevant synchronic as well as diachronic linguistic data of Old Armenian. The nearly identical syntactic functions of the two forms of the Subjunctive in Classical Armenian, along with their diachronically similar morphological structure (owing to the addition of one and the same suffix \*-hɟ to either the present stem or the aorist stem), leaves no doubt that the both forms under consideration are subjunctive-mood forms. As to the difference in the frequency of use of the two forms of the Subjunctive in Classical Armenian, it should be accounted for by the general diachronic tendency for the present subjunctive to get restricted in use and displaced gradually by the aorist subjunctive. On the other hand, a detailed contextual-semantic analysis of uses of the present subjunctive and the aorist subjunctive in Classical Armenian, clearly testifies to the original aspectual (imperfective - perfective) contrast between them. However, it is also evident that the aspectual contrast had already ceased to be conceived of as a living grammatical phenomenon in the case of the Subjunctive in Classical Armenian and therefore did not manifest itself in a regular way: in aspectual terms identical actions/events were often expressed both by the present subjunctive and the aorist subjunctive. Moreover, they could even occur side by side within one and the same sentence.*



**Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի իմաստագործառության  
փոխհարաբերության հարցի շուրջ**

**Սարգիս Ավետյան**

*բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի  
պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ*

**Հիմնաբառեր՝** ներկա ստորադասական, աորիստ ստորադասական, դասական հայերեն, եղանակային հակադրություն, կերպաեղանակային հակադրություն, կերպային հակադրություն, համատեքստաիմաստային վերլուծություն, շարահյուսական գործառություններ, անկատար-կատարյալ:

Փաստարկվում է, որ հին հայերենում ստորադասականի երկու ձևերի (ներկա ստորադասականի ու աորիստ ստորադասականի) իմաստային փոխհարաբերությունը որպես եղանակային կամ կերպաեղանակային հակադրություն բնորոշելու փորձերը չեն հաստատվում հին հայերենի համաժամանակյա ու տարածամանակյա լեզվական համապատասխան փաստերով: Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի գրեթե նույնական շարահյուսական գործառությունները նրանց տարածամանակյա միանման (ներկայի կամ աորիստի հիմքին միևնույն \*-ից ածանցի ավելացման շնորհիվ) ձևաբանական կառուցվածքի հետ միասին կասկած չեն թողնում, որ դիտարկվող երկու ձևերն էլ ստորադասական եղանակի ձևեր են: Ինչ վերաբերում է ստորադասականի այդ երկու ձևերի կիրառահաճախականության տարբերությանը, դա պետք է բացատրել ներկա ստորադասականի գործածության սահմանափակման և աստիճանաբար աորիստ ստորադասականով փոխարինվելու տարածամանակյա ընդհանուր միտումով: Մյուս կողմից՝ ներկա ստորադասականի ու աորիստ ստորադասականի համատեքստաիմաստային հանգամանալից վերլուծությունը ակնհայտորեն վկայում է նրանց միջև սկզբնական կերպային (անկատար - կատարյալ) հակադրության մասին: Բայց ակնհայտ է նաև, որ կերպային հակադրությունը դասական հայերենում ստորադասական եղանակի դեպքում արդեն դադարել էր որպես գործուն քերականական երևույթ գիտակցվելուց, ուստի չէր դրսևորվում կանոնավոր կերպով. կերպային տեսանկյունից նույնատիպ գործողությունները/եղելությունները հաճախ արտահայտվում էին թե՛ ներկա ստորադասականի և թե՛ աորիստ ստորադասականի միջոցով: Ընդ որում՝ դրանք կարող էին նույնիսկ հանդես գալ կողք կողքի միևնույն նախադասության մեջ:

On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձեվերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ

К вопросу о семантико-функциональном соотношении двух форм сослагательного  
наклонения в классическом армянском языке

Саргис Аветян

кандидат филологических наук, доцент кафедры истории  
армянского языка и общего языкознания, ЕГУ

**Ключевые слова:** конъюнктив презенс, конъюнктив аорист, классический армянский язык, модальное противопоставление, аспектуально-модальное противопоставление, аспектуальный контраст, контекстно-семантический анализ, синтаксические функции, несовершенный вид - совершенный вид.

Аргументируется, что попытки охарактеризовать семантическое соотношение между двумя формами сослагательного наклонения (конъюнктив презенсом и конъюнктив аористом) в классическом армянском языке как модальное или аспектуально-модальное противопоставление не поддерживаются соответствующими синхроническими и диахроническими лингвистическими данными древнеармянского языка. Почти идентичные синтаксические функции двух форм сослагательного наклонения в классическом армянском языке вместе с их диахронически одинаковой морфологической структурой (в силу добавления одного и того же суффикса либо к основе презенса либо к основе аориста) не оставляет сомнений в том, что обе рассматриваемые формы являются формами сослагательного наклонения. Что касается различия в частоте употребления этих двух форм в классическом армянском языке, это должно объясняться общей диахронической тенденцией конъюнктив презенса к ограничению употребления и постепенно заменяться конъюнктив аористом. С другой стороны, подробный контекстно-семантический анализ употреблений конъюнктив презенса и конъюнктив аориста в классическом армянском языке ясно свидетельствует об изначальном аспектуальном (несовершенный вид - совершенный вид) контрасте между ними. Вместе с тем очевидно и то, что в классическом армянском языке аспектуальный контраст уже перестал восприниматься как живое грамматическое явление при сослагательном наклонении и поэтому не проявлялся регулярно: с аспектуальной точки зрения идентичные действия/события часто выражались как посредством конъюнктив презенса так и конъюнктив аориста. И притом они могли даже встречаться рядом в одном и том же предложении.

\* \* \*

**Մուտք:** Հայտնի է, որ հին հայերենում ստորադասական եղանակի ձևերը կազմվում են թե՛ ներկայի և թե՛ անցյալ կատարյալի հիմքերից (օր.՝ *գրիցեմ* - *գրեցից*): Սակայն ստորադասականի այդ երկու տիպերի ինչպես քերականական անվանումների, այնպես էլ

Իմաստագործառութային փոխհարաբերության վերաբերյալ հայերենագիտության մեջ մինչև օրս միասնականություն գոյություն չունի: Հայ քերականագիտության մեջ այժմ առավել ընդունված են *ստորադասական 1-ին ապառնի* և *ստորադասական 2-րդ ապառնի* (կամ *ստորադասականի 1-ին ապառնի* և *2-րդ ապառնի*) անվանումները: Իսկ ավելի վաղ գրաբարի քերականները առիստի հիմքից կազմված ստորադասականը դիտում էին իբրև սահմանական եղանակի ապառնի՝ բուն ստորադասական համարելով միայն ներկայի հիմքից կազմվածը (Ավետիսյան, 1985, 193-204): Մինչդեռ եվրոպացի հայերենագետները (և նրանց հետևողությամբ որոշ հայ լեզվաբաններ) ներկայի ու առիստի հիմքերից կազմված ստորադասականի ձևերը համապատասխանաբար բնորոշում են որպես *ներկա ստորադասական* և *առիստ ստորադասական*, դրանց վերագրելով *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն (Meillet, 1913, 92-107; Meillet, 1936, 123; Jensen, 1959, 91-100, 114-118; Godel, 1975, 37-38; Աճառյան, 1959, 60-61): Հետևաբար ստորադասականի վերոնշյալ երկու տիպերի (այսուհետ՝ համապատասխանաբար 1-ին ստորադասական և 2-րդ ստորադասական) իմաստային փոխհարաբերությունը ընդհանուր առմամբ բնորոշվում է կամ որպես կերպային հակադրություն (*անկատար կերպ - կատարյալ կերպ*), կամ էլ որպես եղանակային հակադրություն (ստորադասական - սահմանական): Բայց այդ ձևերի եղանակային տարբերակման հարցում ևս տարակարծություններ են առկա:

**Հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների ենթադրյալ եղանակային (կամ կերպաեղանակային) հակադրության հարցի շուրջ:** Ա. Բագրատունին, թեև 2-րդ ստորադասականը դիտում է իբրև սահմանականի ապառնի, իսկ 1-ին ստորադասականը՝ ստորադասական եղանակ, այդուհանդերձ դրանց նշանակությունները երկու դեպքում էլ ներկայացնում է նույն կերպ՝ արևմտահայերեն ստորադասական եղանակի և *պիտի*-ով սահմանական ապառնիի միջոցով, օր.՝ *սիրեցից - սիրել, պիտի սիրել* և *սիրիցել - սիրել, պիտի սիրել* ևն (Բագրատունի, 1852, 131-168): Բացի դրանից՝ նա նշում է, որ «յամենայն իսկ բայս ապառնիք և ստորադասականք (այն է՝ 1-ին ստորադասականը և 2-րդ ստորադասականը – Ս. Ա.) բազում ուրեք վարին ի տեղի միմեանց...» (Բագրատունի, 1852, 188): Այսինքն՝ Ա. Բագրատունին, ըստ էության, իմաստագործառութային տարբերություն չի տեսնում 1-ին ու 2-րդ ստորադասականների միջև: Գ. Ջահուկյանը ևս, հետևելով հայ քերականագիտական ավանդույթին, բուն ստորադասական է համարում միայն 1-ին ստորադասականը, իսկ 2-րդ ստորադասականը դիտում է որպես սահմանականի ապառնի: Բայց միաժամանակ նշում է, որ ապառնին գործածվում է նաև իբրև ստորադասական և իբրև հրամայականի հորդորական ձև (Джаукян, 1982, 163): Իսկ Մ. Աբեղյանը, ընդունելով, որ 1-ին և 2-րդ ապառնիները (ստորադասականները) սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային իմաստով, նկատում է, որ դրանք նույնիսկ հնագույն մատենագիրների մոտ արդեն շփոթված են և հաճախ նույն նշանակությունն ու գործածությունն ունեն: Ուստի նա գտնում է, որ թե՛ 1-ին և թե՛ 2-րդ ապառնիները իմաստով համապատասխանում են արդի հայերենի սահմանական, ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին, օր.՝ *գնացել, գնացից = գնալու եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ* (Աբեղյան, 1974, 747): Մինչդեռ գրաբարի որոշ քերականներ փորձում են հստակ սահմանազատել 1-ին և 2-րդ ստորադասականները եղանակային տեսանկյունից՝ առաջինի իմաստը ներկայացնելով արևմտահայերեն ստորադասական եղանակի (*նէ* մասնիկով կամ առանց դրա), իսկ երկրորդինը՝ *պիտի*-ով սահմանական ապառնիի միջոցով, ինչպես՝ *սիրիցել - սիրել, սիրեցից - պիտի սիրել*,

**On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ**

*հատանիցեմ – կտրեմ, հատից – պիտի կտրեմ* (Գարագաշեան, 1876, 54-55, 60-61, 70-71, 77-78), *շարժիցեմ – շարժեննեմ* կամ *շարժելու ըլլաննեմ, շարժեցից – պիտի շարժեմ* (Աւետիքեան, 1815, 67-68): Իսկ գրաբարի այլ ուսումնասիրողներ գտնում են, որ 1-ին և 2-րդ ստորադասականների միջև եղանակային հակադրությունը մասնակի բնույթ ունի, քանի որ 2-րդ ստորադասականը գործածվում է ոչ միայն սահմանական ապառնիի, այլև 1-ին ստորադասականի նշանակություններով: Ըստ այդմ՝ նշվում է, որ 1-ին ստորադասականը իմաստով համապատասխանում է արդի հայերենի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, իսկ 2-րդ ստորադասականը՝ արդի հայերենի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, օր.՝ *շարժիցեմ – շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ և շարժեցից – շարժելու եմ, շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ* ևն (Աբրահամյան, 1976, 121-122, 143-145; Խաչատրյան, Թոսունյան, 2004, 173, Համբարձումյան, 2018, 201 հջ., 222 հջ.): Լ. Հովհաննիսյանը ևս ընդունում է, որ ստորադասական 2-րդ ապառնին, ի տարբերություն ստորադասական 1-ին ապառնիի, ունի նաև սահմանական ապառնիի գործառնություն (Հովհաննիսյան, 1975, 306): Բացի դրանից՝ նա կատարում է ստորադասական 1-ին և 2-րդ ապառնիների կիրառական առանձնահատկությունների քննություն բարդ ստորադասական, բարդ համադասական և պարզ նախադասություններում: Հակադրվելով գրաբարի որոշ քերականների այն պնդմանը, որ *զի, որ, յորժամ, էթե, թե* շաղկապներից հետո հիմնականում 1-ին ապառնի (ստորադասական) է գործածվում՝ Լ. Հովհաննիսյանը վիճակագրական հաշվումներով ցույց է տալիս, որ ոչ միայն երկու ապառնիներն էլ հավասարապես կիրառվում են այդ շաղկապներից հետո, այլև 2-րդ ապառնին երբեմն նույնիսկ ավելի հաճախագործաձական է (Հովհաննիսյան, 1975, 301-302): Իսկ բարդ և պարզ նախադասություններում 1-ին և 2-րդ ապառնիների գործառնությունների ընդհանուր պատկերը նա ներկայացնում է հետևյալ կերպ: Բարդ ստորադասական նախադասության մեջ երկու ապառնիներն էլ հավասարապես գործածվում են, իսկ բարդ համադասական նախադասության դեպքում 2-րդ ապառնին դարձյալ լայն կիրառություն ունի: Մինչդեռ 1-ին ապառնին «անկախ» կիրառությամբ (այն է՝ պատմողական ձևով, այլ ոչ թե հարցականի և արգելականի իմաստով) հանդես չի գալիս բարդ համադասական նախադասության բաղադրիչ բոլոր պարզ նախադասություններում միաժամանակ, այլ հանդիպում է միայն 2-րդ ապառնիի հետ (Հովհաննիսյան, 1975, 303-305): Ինչ վերաբերում է պարզ նախադասությանը, «ինչպես բարդ համադասական նախադասության մեջ, այնպես էլ այստեղ, 1-ին ապառնին հանդես է գալիս հատկապես հարցական ու արգելական նախադասություններում» (Հովհաննիսյան, 1975, 305), իսկ «պատմողական բնույթի (որը կարելի է անվանել անկախ) նախադասություններում դրվում է միայն երկրորդ ապառնի» (Հովհաննիսյան, 1975, 306): Ու թեև Լ. Հովհաննիսյանը վերջում եզրակացնում է, որ դասական գրաբարում երկու ապառնիների միջև իմաստային խոր հակադրություն չկա, բայց գտնում է, որ նախադասական ինչ-որ շրջանում եղանակային հակադրություն է առկա եղել: Այսինքն՝ երկու ապառնիներից «յուրաքանչյուրն ունեցել է իր բնորոշ իմաստային ու գործառական կողմերը, և նախադասական ինչ-որ շրջանում է, որ հստակորեն է արտահայտվել սահմանական եղանակի (*գրեցից*) և ստորադասական եղանակի (*գրիցեմ*) հակադրությունը» (Հովհաննիսյան, 1975, 307): Սակայն լեզվի հետագա զարգացման ընթացքում աստիճանաբար սկսել են

խառնվել 1-ին ու 2-րդ ապառնիների սահմանները (Հովհաննիսյան, 1975, 307): Բայց մյուս կողմից՝ Լ. Հովհաննիսյանը նախադասական ինչ-որ շրջանում 1-ին և 2-րդ ապառնիների միջև նաև կերպային (տևական - ոչ տևական և անկատար - կատարյալ) հակադրություն է տեսնում՝ ընդունելով, որ «նախադասական ինչ-որ շրջանում, անշուշտ, այդ երկու ժամանակների հիմնական տարբերությունները եղել են կերպային... Առաջին ապառնուն բնորոշ են եղել տևական և մասամբ անկատար կերպերը, իսկ երկրորդ ապառնուն՝ ոչ տևական և կատարյալ կերպերը: Նշենք նաև, որ տևականություն-ոչ տևականությունը ավելի ակնառու է արտահայտվում, քան կատարյալություն-անկատարությունը» (Հովհաննիսյան, 1975, 316): Նա, իհարկե, չի պարզաբանում՝ արդյոք երկու ապառնիների միջև եղանակային և կերպային հակադրությունները նախադասական շրջանում գործել են համաժամանակյա միևնույն կտրվածքում թե՛ ժամանակագրորեն հաջորդել են միմյանց: Բայց, համենայն դեպս, հայերենի դասական շրջանի համար Լ. Հովհաննիսյանն ընդունում է միաժամանակյա կերպաեղանակային (և՛ կերպային, և՛ եղանակային) հակադրություն: Ընդ որում՝ դժվար չէ նկատել, որ նա 2-րդ ստորադասականին, ըստ էության, երկակի եղանակային կարգավիճակ է վերագրում. որպես ստորադասականի ձև՝ այն հակադրվում է 1-ին ստորադասականին կերպային իմաստով, իսկ որպես սահմանական եղանակի ապառնի՝ նույն 1-ին ստորադասականին հակադրվում է եղանակային իմաստով: Ամփոփելով գրաբարի ապառնիություն արտահայտող ժամանակների յուրահատկությունները՝ Լ. Հովհաննիսյանն այդ մասին մասնավորապես գրում է. «...1. **Գրիցեմ – գրեցից:** Կերպային հակադրություն կա: Երկու ապառնիների գործառական շատ ընդհանրություններ պայմանավորում են **նշված ժամանակների եղանակային ընդհանրությունը: Սակայն նրանք նաև հակադրվում են որպես տարբեր եղանակների ժամանակներ**, քանի որ, ի տարբերություն առաջին ապառնու, **գրեցից**-ը կատարում է նաև սահմանական ապառնու գործառություն (ընդգծումը մերն է – Ս. Ա.)» (Հովհաննիսյան, 1975, 316): Մեր կարծիքով մեջբերված հատվածում առկա է ներքին հակասություն: Լեզվաբանական տիպաբանությունից հայտնի է, որ աշխարհի տարբեր լեզուներում բայական այս կամ այն եղանակային ձևը հաճախ երկրորդաբար կարող է գործածվել նաև այլ եղանակային ձև(եր)ի նշանակությամբ, սակայն նա դրանով երկակի եղանակային կարգավիճակ չի ձեռք բերում, քանի որ դա կհակասեր քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական ըմբռնմանը: Հետևաբար ասել, թե 2-րդ ստորադասականը եղանակային ընդհանրություն ունի 1-ին ստորադասականի հետ, բայց միևնույն ժամանակ նրանք նաև հակադրվում են միմյանց որպես տարբեր եղանակների ժամանակներ, կնշանակեր ասել, թե 2-րդ ստորադասականը եղանակային իմաստով հակադրվում է նաև ինքն իրեն՝ լինելով միաժամանակ և՛ սահմանական, և՛ ստորադասական (որը, անշուշտ, անտրամաբանական է և անընդունելի): 1-ին ու 2-րդ ստորադասականների միջև հնարավոր կերպաեղանակային (միաժամանակ և՛ կերպային, և՛ եղանակային) հակադրության մասին թերևս կարելի էր խոսել այն դեպքում, եթե, ասենք, 1-ին ստորադասականը հին հայերենում կիրառվելիս լիներ միայն ստորադասական եղանակի, իսկ 2-րդ ստորադասականը՝ միայն սահմանական եղանակի գործառություններով: Ընդ որում՝ այդ պարագայում սահմանական եղանակի կատարյալ կերպի ձևը (2-րդ ստորադասականը) ու ստորադասական եղանակի անկատար կերպի ձևը (1-ին ստորադասականը) չէին կարող միմյանց նկատմամբ կա՛մ միայն կերպային, կա՛մ միայն եղանակային հակադրություն արտահայտել<sup>1</sup>: Մինչդեռ իրականում,

<sup>1</sup> Հմմտ., օրինակ, ժ. ուսու. написал и писал бы (կամ писал և написал бы) ձևերը, որոնք միմյանցից տարբերվում են միաժամանակ և՛

**On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ**

ինչպես ստորն կտեսնենք, ոչ միայն 2-րդ ստորադասականը, այլև 1-ին ստորադասականը կարող է դասական հայերենում սահմանական ապառնիի իմաստ արտահայտել (թեև ոչ նույնքան հաճախադեպ): Այսինքն՝ ստորադասականի երկու ձևերն էլ երկրորդաբար նաև սահմանական ապառնիի գործառնություն են կատարում: Մյուս կողմից՝ դասական հայերենում 1-ին ու 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստաիմաստային քննությունը երևան է հանում այդ ձևերի զուտ միայն կերպային հակադրության բազմաթիվ անհերքելի դեպքեր: Մինչդեռ բավարար լեզվական փաստեր չկան, որոնք կարող էին վկայել ենթադրյալ եղանակային հակադրության օգտին: Բայց մինչ այդ հարցի քննությանն անցնելը Լ. Հովհաննիսյանի նշած *ոչ տևական - տևական* և *անկատար - կատարյալ* կերպային հակադրությունների վերաբերյալ կուզենայինք նշել հետևյալը: Կերպի քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական արդի ըմբռնման համաձայն՝ տևականություն-ոչ տևականությունը և անկատարություն-կատարյալությունը ոչ թե միմյանցից անկախ երկու տարբեր կերպային հակադրություններ են, այլ տևականություն-ոչ տևականությունը անավարտություն-ավարտվածության հետ միասին *անկատար-կատարյալ* կերպային հակադրության բնորոշ հատկանիշներն են: Ընդ որում՝ անկատար կերպի ներսում տարբերակում են *կոնկրետ ընթացքային տևականություն*, որը դրսևորվում է ընթացքային կերպի (progressive aspect) միջոցով՝ ցույց տալով կատարման անմիջական ընթացքի մեջ գտնվող գործողություն/եղելություն, և *ընդհանրական տևականություն*, որը դրսևորվում է սովորության կերպի (habitual aspect) միջոցով ու ցույց է տալիս մի որոշակի տևական ժամանակահատվածում սովորաբար, պարբերաբար տեղի ունեցող գործողություն/եղելություն (Ավետյան, 2015, 38-40): Ինչ վերաբերում է 1-ին և 2-րդ ստորադասականների՝ Լ. Հովհաննիսյանի մատնանշած կիրառական առանձնահատկություններին (որոնք ներկայացվեցին վերը), կարծում ենք՝ դրանք չեն կարող որևէ առնչություն ունենալ 1-ին ու 2-րդ ստորադասականների ոչ ենթադրյալ եղանակային, ոչ էլ կերպային հակադրությանը: Մյուս կողմից՝ այդ գործառնական տարբերությունները, մեր դիտարկումների համաձայն, ոչ թե բացարձակ, այլ ընդամենը վիճակագրական (քանակական) բնույթ են կրում: Այսինքն՝ 1-ին ստորադասականը ևս 2-րդ ստորադասականի նման (թեև ոչ նույնքան հաճախադեպ) սկզբունքորեն կարող է հանդես գալ նաև պատմողական խոսքի բարդ համադասական նախադասության բոլոր բաղադրիչ պարզ նախադասություններում միաժամանակ: Եվ բնավ պարտադիր չէ 2-րդ ստորադասականի միաժամանակյա առկայությունը այդ բաղադրիչ պարզ նախադասություններից որևէ մեկում: Բացի դրանից՝ 1-ին ստորադասականի ձևերը սահմանական ապառնիի իմաստով հանդիպում են նաև պարզ նախադասության մեջ: Ասվածը փորձենք լուսարանել Աստվածաշնչից քաղված որոշ օրինակներով:

*Խնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք.* (Յովհ., 7.34)<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, բարդ համադասական նախադասության բաղադրիչ երկու պարզ նախադասություններում էլ 1-ին

կերպային (կատարյալ կերպ - անկատար կերպ), և՛ եղանակային (սահմանական եղանակ - ստորադասական եղանակ) իմաստներով, բայց դրանք ոչ մի համատեքստում միմյանց նկատմամբ չեն կարող դրսևորել կամ միայն կերպային, կամ միայն եղանակային հակադրություն:

<sup>1</sup> Այստեղ և հետագա շարադրանքում հայերեն օրինակները բերվում են Հ. Հովհաննես Զոհրապյան (Յովհաննես Զոհրապեան) վարդապետի աշխատասիրությամբ 1805 թ. Վենետիկում տպագրված Աստվածաշնչի տեքստից, որը, իրավամբ, Աստվածաշնչի գիտական հրատարակություն է և սողատակի ծանոթագրություններում տալիս է տարբեր ձեռագրերում ու մինչ այդ եղած

ստորադասական է կիրառված սահմանական ապառնիի իմաստով՝ «**Կփնտրեք** ինձ և **չեք գտնիք**»<sup>1</sup>: Հունարեն բնագրում երկու դեպքում էլ սահմանական ապառնի է՝ **zētēsete me kai ouch heurēsete** «**Կփնտրեք** ինձ և **չեք գտնիք**»<sup>2</sup>: Կամ՝ *զի բազուսք գայցեն յանուն իս, և ասիցեն թէ ե՛ս եմ Քրիստոսն, և զբազո՛ւնս մոլորեցուցանիցեն* (Մատթ., 24.5): Հունարենում դարձյալ սահմանական ապառնիի ձևեր են գործածված, միայն թե *ասիցեն* ձևի դիմաց ներկա դերբայով դերբայական դարձված է՝ *polloi gar eleusontai epi tō onomati mou legontes* Egō eimi ho Christos kai pollous **planēsousin** «Քանզի շատերը **կգան** իմ անվան տակ՝ **ասելով**՝ «Ես եմ Քրիստոսը», և շատերին **կմոլորեցնեն**»: Կամ՝ *Փոքր մի, և ո՛չ ևս տեսանիցեք զիս. և ապա սակաւիկ մի, և տեսանիցեք զիս.* (Յովհ., 16.16): Հունարենում *ո՛չ ևս տեսանիցեք* ձևի դիմաց սահմանական ներկա է՝ մոտալուտ, անխուսափելի ապառնիի իմաստով (հին հունարենի սահմանական ներկայի զանազան իմաստային կիրառությունների մասին տե՛ս Wallace, 1996, 513-539, Wallace, 2000, 219-231), իսկ *տեսանիցեք* ձևի դիմաց՝ սահմանական ապառնի. հմմտ. *Mikron kai ouketi theōreite me kai palin mikron kai opsesthe me* «Մի փոքր և **այլևս չեք տեսնում** <**չեք տեսնի**> ինձ, և դարձյալ մի փոքր և **կտեսնեք** ինձ»: Կամ՝ *Վասն այդորիկ՝ ահաւասիկ ես առաքե՛մ առ ձեզ մարգարէս, և իմաստունս, և դպիրս. ի նոցանէ սպանանիցեք, և ի խաչ հանիցեք, և ի նոցանէ տանջիցե՛ք ի ժողովորդս ձեր, և հալածիցեք ի քաղաքէ ի քաղաք:* (Մատթ., 23.34): Նկատենք, որ այստեղ ևս 1-ին ստորադասականի ձևերը հանդես են գալիս պատմողական բնույթի մեկ բարդ համադասական նախադասության կազմում, և որ հունարենում դրանց դիմաց դարձյալ սահմանական ապառնիի ձևեր են՝ ...ex autōn **apokteneite** kai **staurōsete** kai ex autōn **mastigōsete** en tais synagōgais hymōn kai **diōxete** apo poleōs eis polin «...նրանցից <ումանց> դուք **կսպանեք** և **կխաչեք**, նրանցից <ումանց> **կտանջեք** ձեր ժողովրդարաններում <սինագոգներում> և **կհալածեք** քաղաքից քաղաք»: Կարելի է այս կարգի օրինակների շարքը դեռ երկար թվարկել, բայց կարծում ենք՝ այսքանն էլ բավական է՝ ցույց տալու համար, որ հին հայերենում ոչ միայն հարցական և հրամայական, այլև պատմողական խոսքի դեպքում 1-ին ստորադասականը ևս սկզբունքորեն կարող է հանդես գալ բարդ համադասական նախադասության բաղադրիչ բոլոր պարզ նախադասություններում միաժամանակ: Այժմ բերենք պատմողական պարզ նախադասության որոշ օրինակներ: *Եւ ա՛յս նշանա՛կ ձեզ. գտանիցեք մանուկ պատեալ ի խանձարուրս, և եղեա՛լ ի մտուր* (Ղուկաս, 2.12): Այստեղ 1-ին ստորադասականի *գտանիցեք* ձևը գործածված է սահմանական ապառնիի իմաստով՝ «կգտնեք», և հունարենում դրա դիմաց սահմանական ապառնի է՝ **heurēsete** «կգտնեք». հմմտ. *kai touto hymin to sēmeion heurēsete brephos esparganōmenon kai keimenon en phatnē* «Եվ այս՝ ձեզ համար <որպես> նշան. **կգտնեք** խանձարուրով պատված և մտուրի մեջ դրված մանուկ»: Կամ՝ *Եւ յայնմ աւուր զիս ինչ ո՛չ*

հրատարակություններում հանդիպող տարբերակային ձևերն ու տարբերությունները՝ «*Բազուսք. Ոմանք.*» և նման վիճակագրական բնորոշումներով հանդերձ:

<sup>1</sup> Տվյալ դեպքում *սահմանական ապառնի* եզրույթը գործածելիս մենք էլնում ենք այն հանգամանքից, որ արդի արևելահայերենի *կ(ը)* - *ապառնի* (*կզնամ, կխոսեն*) որպես ենթադրական եղանակի և/կամ պայմանական եղանակի բայաձև բնորոշելու փորձերը առարկություն են հարուցում ընդհանուր լեզվաբանական և տիպաբանական տեսանկյունից, և որ *կ(ը)* - *ապառնի* իմաստագործառության առանձնահատկություններով էապես չի տարբերվում այլ լեզուների սահմանական եղանակի ապառնի ժամանակից: Ուստի կարծում ենք՝ թե՛ *ու- ապառնի* (օր.՝ *գրելու ես*) և թե՛ *կ(ը) - ապառնի* (օր.՝ *կգրեմ*) պետք է դիտել իբրև սահմանականի ապառնի ժամանակաձևեր՝ դրանցից առաջինը տիպաբանական տեսանկյունից բնորոշելով որպես *սպասելի կամ նախորոշված ապառնի*, իսկ երկրորդը՝ *պարզ (սովորական) ապառնի* (Ավետյան, 2022, 22-35):

<sup>2</sup> Այստեղ և հետագա շարադրանքում հունարեն բնագրից մեջբերված հատվածների՝ արդի արևելահայերեն թարգմանությունը մեր հեղինակայինն է: Ընդ որում՝ անհրաժեշտության դեպքում հունարեն ձևերը նախ թարգմանվում են բառացի, իսկ այնուհետև սուրանկյուն <> փակագծերում տրվում է այն իմաստը, որը, մեր կարծիքով, նկատի է առնված տվյալ պարագայում:



**On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ**

*հարցանիցէք: Ամէն ամէն ասե՛մ ձեզ. զի գոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տացէ՛ ձեզ* (Յովհ., 16.23): Այստեղ *Եւ յայնմ ատուր զիս ինչ ոչ հարցանիցէք* հատվածը պատմողական բնույթի ինքնուրույն պարզ նախադասություն է, որի միակ ստորոգյալը, ինչպես տեսնում ենք, դարձյալ դրված է 1-ին ստորադասականի ձևով: Իսկ հունարեն բնագրում *ոչ հարցանիցէք* ձևի դիմաց սահմանական ապառնի է՝ *kai en ekeinē tē hēmera eme ouk erōtēsete ouden* «Եվ այն օրը ինձ ոչինչ չէք հարցնի»:

Այսպիսով՝ բերված օրինակները հաստատում են մեր վերոնշյալ դիտարկումը այն մասին, որ պարզ և բարդ համադասական նախադասությունների դեպքում 1-ին և 2-րդ ստորադասականների համար Լ. Հովհաննիսյանի նշած գործառնության տարբերությունները ոչ թե բացարձակ, այլ վիճակագրական (քանակական) բնույթ են կրում: Հետևաբար հին հայերենում ստորադասականի երկու տիպերը սկզբունքորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրառություններում: Իսկ որոշ գործառնությունների դեպքում վիճակագրական տեսնակյունից 1-ին ստորադասականի համեմատաբար քիչ գործածական լինելը 2-րդ ստորադասականի համեմատությամբ, կարծում ենք, պետք է բացատրել 1-ին ստորադասականի գործառնության սահմանափակման տարածամանակյա ընդհանուր միտումով: Դա առավել նկատելի և մեծ թափ ստանում հատկապես գրաբարի հետդասական շրջանից սկսած, բայց այդ միտումի որոշ դրսևորումներ արդեն կարելի է տեսնել նույնիսկ դասական շրջանում: Այլ կերպ ասած՝ թեև գրաբարյան ստորադասականի երկու տիպերն էլ, ինչպես հայտնի է, հայերենի հետագա զարգացման ընթացքում ի վերջո դուրս են մղվել լեզվից՝ փոխարինվելով գրաբարյան սահմանական ներկայի ձևերով<sup>1</sup>, բայց մինչ այդ 1-ին ստորադասականն սկսել է աստիճանաբար իր տեղը զիջել 2-րդ ստորադասականին (որը, ի դեպ, ընդունում է նաև Լ. Հովհաննիսյանը (հմմտ. Հովհաննիսյան, 1975, 307): Ուստի մենք հակված ենք կարծելու, որ որոշ կիրառություններում այդ սահմանափակման միտումը համեմատաբար ավելի վաղ և ավելի մեծ չափով է գործել, քան մյուսներում, և, ըստ այդմ, արդեն դասական հայերենում 1-ին ստորադասականի վերոնշյալ մասնակի գործառնության սահմանափակումները նույնպես դրա արդյունք են:

**Հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների կերպիմաստային հակադրության հարցի շուրջ:** Ինչ վերաբերում է 1-ին և 2-րդ ստորադասականների իմաստային փոխհարաբերությանը, կարծում ենք՝ բավարար լեզվական փաստեր չկան, որոնք կվկայեին հիշյալ ձևերի միջև ենթադրյալ եղանակային հակադրության օգտին: Մինչդեռ հին հայերենի համաժամանակյա ու տարածամանակյա մի շարք անհերքելի փաստեր վկայում են սկզբնական կերպային հակադրության մասին, թեև դասական հայերենում, ինչպես ստորև կտեսնենք, այն այլևս չէր գիտակցվում որպես գործուն քերականական օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն: Բայց մինչ այդ ներկայացնենք որոշ տիպաբանական տվյալներ:

Տիպաբանորեն հաճախադեպ երևույթ է, որ միևնույն լեզուն կարող է ունենալ ապառնիություն արտահայտող մեկից ավելի ձևեր, որոնք սովորաբար միմյանցից տարբերվում են ժամանակային հեռավորության աստիճանով, հավաստիության և

<sup>1</sup> Ըստ Յ. Կարստի՝ միջին հայերենում «հին ստորադասականի և ապառնիի (այն է՝ 1-ին ստորադասականի և 2-րդ ստորադասականի – Մ. Ա.) միայն առանձին հետքեր են հանդիպում կայուն բանաձևերում և որպես հնաբանություններ» (Karst, 1901, 299):

ենթադրականության իմաստային հարաբերակցությամբ, ինչպես նաև տարբեր եղանակավորումային (modal) իմաստներով (Dahl, 1985, 110; Hilpert, 2008, 49 ff.): Մյուս կողմից՝ կան նաև լեզուներ, որոնք ապառնիի հատուկ ձև չունեն և այդ իմաստն արտահայտում են մեկ այլ եղանակաժամանակային ձևով (շատ հաճախ ստորադասական եղանակի կամ սահմանական ներկայի միջոցով) կամ զանազան եղանակավորումային կառույցներով: Առավել ընդունված տեսակետի համաձայն՝ հ.-ե. նախալեզուն ևս չի ունեցել ապառնի ժամանակ որպես առանձին բայական կարգ, և այդ իմաստն արտահայտվել է, մի կողմից, ցանկական եղանակային ձևի (desiderative), մյուս կողմից՝ ստորադասական եղանակի միջոցով: Ի դեպ, հումերոսյան հունարենում և վեդայական հնդկերենում ստորադասական եղանակը գործածվում է ինչպես իր բուն եղանակային, այնպես էլ ապառնիի իմաստ արտահայտելու նպատակով (Sampanis, 2017, 237-242; Lyons, 1977, 815-818):

Արդ, ինչպես տեսնում ենք, ստորադասական եղանակի գործածվելը նաև ապառնի ժամանակի իմաստով տիպաբանորեն անսովոր երևույթ չէ: Ինչ վերաբերում է հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականներին, հայտնի է, որ դրանք տարածամանակյա տեսանկյունից կազմված են համապատասխանաբար ներկայի ու աորիստի հիմքերից՝ միննույն *-ից-* ածանցի հավելումով, որի *-ի-* ձայնավորը ներկայի հիմքի դեպքում հետձայնավորային դիրքում իրացվել է իբրև *-յց-*, օր.՝ *\*բերե-յց-եմ > \*բերեցեմ > բերիցեմ*, իսկ աորիստի հիմքի դեպքում միջբաղաձայնային դիրքում սղվել է՝ *\*բեր-ից-ես > բերցես*: Ենթադրվում է նաև, որ *-ից-* ածանցը ծագում է հ.-ե. *\*-iske-* նախատիպից, իսկ որոշ հետազոտողներ այն ուղղակիորեն կապում են հ.-ե. ներկայի *\*-ske-* հիմքակազմ ածանցի *\*-iske-* տարբերակի (հմմտ. հուն. *heur-iskō* «գտնում եմ») հետ (Godel, 1975, 115-117; Schmitt, 2007, 143, 150-151; Meillet, 1936, 121-122): Մյուս կողմից, ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Մեյլեն, թեև հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականները ծագմամբ հ.-ե. որևէ եղանակի անմիջական շարունակությունը չեն, բայց գործառության լեզուանկյունից դրանք համապատասխանում են հ.-ե. ստորադասականին, մասամբ էլ ըղձականին (Meillet, 1936, 123): Ըստ այդմ՝ տեղին չէ 2-րդ ստորադասականի դեպքում «ապառնի» եզրույթի գործածումը հայ քերականագիտության մեջ, քանի որ հին հայերենում այն հանդես է գալիս ոչ միայն ապառնի ժամանակի, այլև ստորադասականի, մասամբ էլ ըղձականի գործառություններով (Meillet, 1913, 109; Meillet, 1936, 123; Godel, 1975, 37-38; Jensen, 1959, 91, 97; Schmitt, 2007, 133, 150): Այսպիսով՝ հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների համաժամանակյա գրեթե նույնական գործառությունները և այդ երկու ձևերի տարածամանակյա ձևակազմական ընդհանրությունը տիպաբանական տվյալների հետ համատեղ անառարկելիորեն հաստատում են, որ 2-րդ ստորադասականը ևս ստորադասականի եղանակային կարգավիճակ ունի: Մյուս կողմից՝ դասական հայերենում 1-ին ու 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստաիմաստային քննությունը որևէ կասկած չի թողնում, որ ստորադասականի այդ երկու տիպերը սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային (*անկատար կերպ – կատարյալ կերպ*) իմաստով, և շատ հաճախ դեռ հստակ դրսևորվում է այդ կերպային հակադրությունը (հմմտ. նաև Meillet, 1913, 107; Meillet, 1936, 123; Jensen, 1959, 117; Աճառյան, 1959, 60-61). օրինակ՝ *Կին յորժամ ծնանիցի՝ տրտմութի՛ւն է նմա, զի հասեա՛լ է ժամ նորա. այլ յորժամ ծնցի զմանուկն, ո՛չ ևս յիշէ զնեղութիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մա՛րդ յաշխարհ* (Յովհ., 16.21): Բերված օրինակում հին հայերենի *ծնանիցի* անկատար կերպի ներկա (կամ՝ 1-ին) ստորադասականի և *ծնցի* կատարյալ կերպի աորիստ (կամ՝ 2-րդ) ստորադասականի դիմաց

On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ

հունարենում նույնպիսի կերպային ձևեր են. հմմտ. մի կողմից՝ *hē gynē hotan tiktē* – Կին յորժամ **ծնանիցի** «կինը երբ որ **ծննդաբերելիս է լինում**», մյուս կողմից՝ *hotan de gennēsē to paidion ouketi mnēmoneuei...* – այլ յորժամ **ծնցի** զմանուկն, ո՛չ ևս յիշէ... «իսկ երբ երեխային **ծնում է <վերջացնում>**, այլևս չի հիշում...»: Կամ՝ *Այլ եկեացէ ժամանակ, և ա՛յժմ իսկ է. յորժամ ճշմարիտքն երկրպագութ՝ երկի՛ր պագանիցեն Շոր՝ հոգւո՛ւ վ և ճշմարտութեամբ.* (Յովհ., 4.23): Կարծում ենք՝ տվյալ դեպքում գալու գործողությունը դիտվել է որպես միանգամյա ավարտուն փաստ, ուստի և դրված է կատարյալ կերպի (այն է՝ 2-րդ ստորադասականի) ձևով, մինչդեռ երկրպագելու գործողությունը, որն ակնհայտորեն ենթադրում է տևական, շարունակական գործընթաց, արտահայտված է անկատար կերպի (այն է՝ 1-ին ստորադասականի) ձևով: Արդ ուշագրավ է, որ ռուսերեն թարգմանության մեջ երկրպագելու գործողությունն արտահայտված է դարձյալ անկատար կերպի ձևով (անկատար ապառնիի միջոցով)՝ *будут поклоняться* «կերկրպագեն»: Ինչ վերաբերում է հունարեն բնագրին, *երկի՛ր պագանիցեն* ձևի դիմաց սահմանական ապառնի է (*proskynēsousin* «կերկրպագեն»), և, ինչպես հայտնի է, հունարենում սահմանական ապառնին *անկատար-կատարյալ* կերպային հակադրություն չունի: Իսկ *եկեացէ* ձևի դիմաց սահմանական ներկա է՝ մոտալուտ և անխուսապելի ապառնիի իմաստով՝ *erchetai* «գալիս է <կգա>»: Հայ թարգմանիչները վերջին դեպքում իրավացիորեն առաջնորդվել են բուն համատեքստային իմաստով՝ կիրառելով կատարյալ կերպի ստորադասականի ձև՝ սահմանական ապառնիի նշանակությամբ: Իսկ ահա հաջորդ օրինակում նույն *երկիր պագանել* բայը երկու հարակից նախադասությունների մեջ ակնհայտորեն *անկատար - կատարյալ* կերպային հակադրություն է արտահայտում. հմմտ. *Եւ մտցէ առաջնորդն ընդ ճանապարհ կամարի դրանն արտաքնոյ... և երկի՛ր պագգէ ի վերայ սենոց դրանն՝ և էլցէ. և դուռն մի՛ փակեցի մինչև ցերեկոյ: Եւ երկի՛ր պագանիցէ ժողովուրդ երկրին առաջի մտից դրանն յաւուր շաբաթուց՝ և յամսագլուխս՝ առաջի Տեառն* (Եզեկիէլ, 46.2-3): Տվյալ դեպքում առաջնորդի գործողությունները, այդ թվում՝ երկրպագելը, դիտվում են որպես ամբողջական, ավարտուն գործընթացներ: Այլ կերպ չի էլ կարող լինել, քանի որ թվարկվում են իրար հաջորդող գործողություններ, և ըստ այդմ՝ յուրաքանչյուր հաջորդող գործողություն ինքնին ենթադրում է նախորդող գործողության ավարտ: Մինչդեռ ժողովրդի՝ Աստծուն երկրպագելը դիտվում է որպես տևական գործընթաց, ուստի և բայը դրված է անկատար կերպի (1-ին ստորադասականի) ձևով: Ի դեպ, ռուսերեն թարգմանության մեջ առաջին դեպքում կատարյալ կերպի ապառնի է կիրառված, իսկ երկրորդ դեպքում՝ անկատար կերպի ապառնի. հմմտ. *Князь пойдёт* через внешний притвор ворот... и он у порога ворот *поклонится* Господу и *выйдет*... И народ земли *будет поклоняться* пред Господом, при входе в ворота, в субботы и новомесячия (ընդգծումը մերն է – Ս. Ա.): Հունարենում *մտցէ, երկի՛ր պագգէ, էլցէ* և *երկի՛ր պագանիցէ* ձևերի դիմաց սահմանական ապառնի ձևեր են, որոնք տվյալ համատեքստում պատվիրական, հրահանգողական նշանակությամբ են գործածված (հին հունարենի սահմանական ապառնիի զանազան իմաստային կիրառությունների մասին տե՛ս Wallace, 1996, 566-571; Wallace, 2000, 244-245)՝ *kai eiseleusetai* ho aphēgoumenos «և կմտնի/պետք է մտնի առաջնորդը», *proskynēsei* «կերկրպագի/պետք է երկրպագի», *exeleusetai* «դուրս կգա/պետք է դուրս գա», *kai proskynēsei* ho laos «և կերկրպագի/պետք է երկրպագի ժողովուրդը»: Կարծում ենք՝ անկատար կերպի իմաստն ակնառու է նաև հետևյալ օրինակում. *Եւ ասէ ցՄիմովն*

*Յիսուս. Մի՛ երկնչիր՝ յայսմ հետև զմարդի՛կ նրսայցես ի կեանս* (Ղուկաս, 5.10): Հունարենում *նրսայցես ի կեանս* արտահայտության դիմաց *օժանդակ բայ + ներկա դերբայ* վերլուծական նկարագրական կառույց է՝ դրված ապառնի ժամանակաձևով՝ *esē zōgrōn* «ողջ նրսացող կլինես» (< zōgreō «ողջ բռնել, նրսալ և ողջ պահել» բայից)՝ ...*Mē phobou apo tou nyn anthrōpous esē zōgrōn* «...Մի՛ վախեցիր. այժմվանից մարդիկ կորսաս ողջ-ողջ»: Ակնհայտ է, որ այստեղ խոսքը ոչ թե միանգամյա ավարտուն, այլ տևական ու պարբերաբար կատարվելիք և ըստ այդմ՝ անկատար (սովորության) կերպի գործողության մասին է: Իսկ ահա հետևյալ նախադասության մեջ Հիսուսի գալու և պատմելու գործողություններն ակնհայտորեն կատարյալ կերպի ավարտուն և ոչ տևական եղելություններ են ցույց տալիս, ուստի և արտահայտված են 2-րդ ստորադասականի ձևով՝ *Ասէ ցնա կինն. Գիտեմ զի Մեսսիա գա՛յ՝ անուանեալն Քրիստոս. յորժամ եկեացէ, նա՛ պատմեացէ մեզ զամենայն* (Յովհ., 4.25): Ի դեպ, նկատենք, որ ռուսերենում երկու դեպքում էլ կատարյալ կերպի ապառնի է կիրառված՝ *Когда придет Он, то возвестит нам все*: Հունարեն բնագրում *եկեացէ* ձևի դիմաց առիստ ստորադասական է (*hotan* «երբ որ» շաղկապը սովորաբար ստորադասականի ձև է պահանջում), իսկ *պատմեացէ* ձևի դիմաց՝ սահմանական ապառնի՝ ...*hotan elthē ekeinos anangelei hēmin hapanta* «...երբ որ նա **գա**, կպատմի/կհայտնի մեզ ամեն ինչ»:

Բայց եթե մի կողմից այս և նմանատիպ այլ օրինակներ համոզիչ կերպով վկայում են, որ ստորադասականի երկու տիպերը հին հայերենում իրոք *անկատար - կատարյալ* կերպային հակադրություն են արտահայտել, ապա, մյուս կողմից, քիչ չեն նաև այն դեպքերը, երբ 1-ին և 2-րդ ստորադասականները գրեթե նույնական իմաստային համատեքստում փոխարինում են միմյանց, կամ կերպային տեսանկյունից նույնատիպ գործողությունները/եղելություններն արտահայտված են մի դեպքում 1-ին ստորադասականի, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով. հմմտ. *Եւ վաղվադակի երթա՛յք ասացէ՛ք աշակերտացն նորա թէ յարեա՛ւ. և ահա՛ յառաջանա՛յ քան զձեզ ի Գալիլեա. ա՛նդ տեսանիցէք զնա. (Մատթ., 28.7)* և *Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիր, երթա՛յք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա՛ և ա՛նդ տեսցեն զիս (Մատթ., 28.10)*: Այստեղ 1-ին ստորադասականի *տեսանիցէք* և 2-րդ ստորադասականի *տեսցեն* ձևերով նկատի է առնված միևնույն միանգամյա գործողությունը, և հունարենում երկու դեպքում էլ ապառնի ժամանակաձև է՝ *opsesthe* «կտեսնեք» և *opsontai* «կտեսնեն»: Հետևյալ երկու օրինակներում ևս կերպային առումով նույնատիպ գործողություններն արտահայտված են մի դեպքում 1-ին ստորադասականի, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով. հմմտ. *Յայնժամ մատնեացեն զձեզ ի նեղութիւն, և սպանանիցեն՝ զձեզ. և եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ (Մատթ., 24.9)*: Կամ՝ *Զի ա՛յնպէս անցցես ընդ ջուրն օտար, և անցանիցես ընդ գետն օտարական. (Առակք Սող., 9.18)* (երկու դեպքում էլ ընդգծումը մերն է – **Մ. Ա.**):

Բացի դրանից՝ կարծում ենք՝ Աստվածաշնչի հայերեն տարբեր ձևագրերում 1-ին և 2-րդ ստորադասականների գործածության հարցում նկատվող հաճախադեպ տարբերակայնությունների գոնե մի մասը նույնպես սկզբնական կերպային հակադրության արդեն մթագնած լինելու և որպես այդպիսին չգիտակցվելու անխուսափելի հետևանք է (և հավանաբար գալիս է դեռևս դասական հայերենի շրջանից): Այդ առումով ուշագրավ է հետևյալ օրինակում առկա *յանիցեն/յարիցեն* տարբերակայնությունը Մատթեոսի և Մարկոսի ավետարաններում. հմմտ. *մի կողմից Մատնեացէ եղբայր զեղբայր ի մա՛հ, և հայր՝ զորդի՛. և յանիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն՝ զնոսա //Ոմանք. Եւ յարիցեն որդիք:* (Մատթ.,

10.21), մյուս կողմից՝ *Մատնեցէ եղբայր զեղբայր ՚ի մահ, և հայր՝ գորդի՛. և յարիցեն որդիք ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա/ Ոմանք. Եւ յանիցեն որդիք:* (Մարկոս, 13.12) (երկու դեպքում էլ ընդգծումը մերն է – Ս. Ա.): Ինչպես կարելի է տեսնել *Ոմանք.* նշումից, Մատթեոսի ավետարանի ձեռագրերի մեծ մասում 1-ին ստորադասականի *յանիցեն* ձև է առկա, և միայն որոշ ձեռագրերում դրա փոխարեն հանդես է գալիս 2-րդ ստորադասականի *յարիցեն* ձևը: Մինչդեռ Մարկոսի ավետարանում ճիշտ հակառակ պատկերն է. ձեռագրերի մեծ մասը *յարիցեն* ձև է հանդես բերում, և միայն որոշ ձեռագրեր ունեն *յանիցեն* ձև: Անկախ այն բանից՝ արդյո՞ք նախնական տարբերակը ձեռագրերի մեծ մասում հանդես եկող ձևն է, թե՛ որոշ ձեռագրերում պահպանվածը, տվյալ դեպքում մեզ առավել հավանական է թվում, որ սկզբնապես հիշյալ ավետարաններից մեկում գործածված է եղել *յանիցեն*, իսկ մյուսում՝ *յարիցեն* ձև: Հետագայում գրիչները փորձել են երկու ավետարաններում հանդիպող այդ նույն միտքը համապատասխանեցնել նաև արտահայտման ձևով, և փոփոխումը կատարվել է երկու տարբեր ուղղություններով. որոշ գրիչներ Մատթեոսի ավետարանի հետևողությամբ և/կամ ազդեցությամբ փոխել են մարկոսյան նախնական տարբերակը, իսկ այլ գրիչներ, ընդհակառակը, Մարկոսի ավետարանի հետևողությամբ և/կամ ազդեցությամբ փոխել են մատթեոսյան նախնական տարբերակը: Բայց մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից առավել կարևոր է այն, որ այս նույն օրինակում երկու ավետարաններում էլ 2-րդ ստորադասականի *մատնեցէ ի մահ* և 1-ին ստորադասականի *սպանանիցեն* ձևերը գործածված են կողք կողքի միևնույն բարդ համադասական նախադասության կազմում, և որ այդ հարցում ձեռագրային տարբերակայնություն չի նկատվում: Ակնհայտ է նաև, որ *մատնեցէ ի մահ*, *յանիցեն/յարիցեն* և *սպանանիցեն* երեք բայերի դեպքում էլ նկատի են առնված ընդհանրական (այսինքն՝ կերպային տեսանկյունից նույնատիպ, իսկ *մատնեցէ ի մահ* և *սպանանիցեն* բայերի դեպքում՝ նաև հասկացական իմաստով նույնական) բայական գործողություններ և ըստ այդմ՝ ոչ թե մեկ կոնկրետ, որոշակի եղբայր, երեխա և ծնող, այլ առհասարակ՝ եղբայրները, երեխաները և ծնողները: Հետևաբար եթե *անկատար -կատարյալ* կերպային հակադրությունը դասական հայերենում գործուն օրինաչափություն լիներ, երեք բայերն էլ պետք է կիրառված լինեին միևնույն կերպային ձևով: Բայց քանի որ այդպես չէ, դա ևս վկայում է, որ արդեն V դարում երբեմնի կերպային հակադրությունը ստորադասական եղանակի դեպքում այլևս չէր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն: Ուստի 1-ին և 2-րդ ստորադասականները (կամ՝ ներկա և աորիստ ստորադասականները) հաճախ փոխարինում էին միմյանց թե՛ ապառնիի և թե՛ բուն ստորադասականին բնորոշ նշանակություններով գործածվելիս (Բագրատունի, 1852, 188; Աբեղյան, 1974, 747):

**Եզրակացություն:** Այսպիսով՝ հին հայերենի 1-ին և 2-րդ ստորադասականների իմաստային փոխհարաբերությունը միաժամանակ և՛ որպես եղանակային, և՛ որպես կերպային հակադրություն բնորոշելու փորձերը չեն հաստատվում հին հայերենի համաժամանակյա ու տարաժամանակյա լեզվական տվյալներով. չկան բավարար փաստական հիմքեր, որոնք կվկայեին ստորադասականի երկու տիպերի միջև ենթադրյալ եղանակային հակադրության օգտին: Մինչդեռ դասական հայերենում 1-ին և 2-րդ ստորադասականների համաժամանակյա գրեթե նույնական գործառնությունները և նրանց տարաժամանակյա ձևակազմական ընդհանրությունը (միևնույն *-ից* հիմքակազմ ածանցի

կիրառմամբ) տիպաբանական տվյալների հետ համատեղ անառարկելիորեն հաստատում են, որ այդ երկու ձևերն էլ ստորադասականի եղանակային կարգավիճակ ունեն: Ընդ որում՝ 1-ին և 2-րդ ստորադասականներն սկզբունքորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրառություններում: Իսկ որոշ գործառությունների դեպքում 1-ին ստորադասականի համեմատաբար քիչ գործածական լինելը պետք է բացատրել նրա գործառության սահմանափակման տարածամանակյա ընդհանուր միտումով: Դա առավել մեծ թափ է ստանում հատկապես գրաբարի հետդասական շրջանից սկսած, բայց այդ միտումի որոշ դրսևորումներ արդեն կարելի է տեսնել նույնիսկ դասական շրջանում: Մյուս կողմից՝ 1-ին ու 2-րդ ստորադասականների կիրառությունների համատեքստախմաստային քննությունը որևէ կասկած չի թողնում, որ ստորադասականի այդ երկու տիպերը սկզբնապես միմյանց հակադրվել են կերպային իմաստով (*անկատար կերպ* – *կատարյալ կերպ*), և այդ կերպային հակադրությունը շատ դեպքերում դեռ հստակ դրսևորվում է դասական հայերենում: Բայց մյուս կողմից՝ նույնքան ակնհայտ է, որ նույնիսկ դասական շրջանում ստորադասական եղանակի դեպքում կերպային հակադրությունն այլևս չէր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն. շատ հաճախ կերպային տեսանկյունից նույնատիպ գործողություններն արտահայտված են մի դեպքում 1-ին ստորադասականի, մյուս դեպքում՝ 2-րդ ստորադասականի միջոցով՝ առանց որևէ նկատելի իմաստային տարբերության:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ. (1974)**, Երկեր, հ. 2, Ե., ՀՄՍՀ ԳԱ, 848 էջ:
- Աբրահամյան Ա. (1976)**, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Լույս» հրատ., 558 էջ:
- Աճառյան Հ. (1959)**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Ա, Ե., ՀՄՍՌ ԳԱ, 594 էջ:
- Ավետիսյան Հ. (1985)**, Գրաբարի ստորադասական եղանակը և նրա ըմբռնումը հայ քերականության պատմության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., N 1, 193-204 էջ:
- Ավետյան Ս. (2015)**, Անգլերենի ժամանակային հարաբերակցության կարգի և հայերենի ոչ իրադրական ժամանակի (ենթա-)կարգի զուգադրական քննություն, «Բանբեր Երևանի համալսարանի», N 1 (16), 38-40 էջ:
- Ավետյան Ս. (2022)**, Արդի արևելահայերենի *կ(ը)- ապառնիի* և *-ու ապառնիի* իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», N 2, 22-35 էջ:
- Աւետիսեան Գ. (1815)**, Քերականութիւն հայկական, Վենետիկ, հրատ. Ս. Ղազար, 580 էջ:
- Բազրատունի Ա. (1852)**, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, հրատ. Ս. Ղազար, 744 էջ:
- Գարագաշեան Ա. Մ. (1876)**, Գործնական քերականութիւն հայ լեզուի, Կ. Պօլիս, հրատ. Յ. Գավաֆեան, 1876, 248 էջ:
- Խաչատրյան Լ., Թոսունյան Գ. (2004)**, Գրաբարի դասագիրք, Ե., հրատ. «Զանգակ-97», 384 էջ:
- Համբարձումյան Վ. (2018)**, Գրաբարի ձեռնարկ, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 436 էջ:
- Հովհաննիսյան Լ. (1975)**, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, «Լեզվի և ոճի հարցեր», պր. III, Ե., ՀՄՍՀ ԳԱ, 252-319 էջ:
- Dahl Ö. (1985)**, Tense and Aspect Systems, Oxford: Basil Blackwell, 213 p.
- Godel R. (1975)**, An Introduction to the Study of Classical Armenian, Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag, 139 p.
- Hilpert M. (2008)**, Germanic Future Constructions: A usage-based approach to language change, Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 205 p.
- Jensen H. (1959)**, Altarmenische Grammatik, Heidelberg: Carl Winter. Univeritätsverlag, 224 S.

On the Question of the Semantic-Functional Relationship  
Between the Two Forms of the Subjunctive in Classical Armenian  
Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի  
իմաստագործառնության փոխհարաբերության հարցի շուրջ

- Karst J. (1901), *Historische Grammatik des Kilikisch-Armenischen*, Strassburg: Verlag Von Karl J. Trübner, 444 S.
- Lyons J. (1977), *Semantics*, Vol. 2, Cambridge: Cambridge University Press, 897 p.
- Meillet A. (1913), *Altarmenisches Elementarbuch*, Heidelberg: Carl Winters Univeritätsbuchhandlung, 212 S.
- Meillet A. (1936), *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique*, 2<sup>nd</sup> éd., Vienne: Imprimerie des PP. Mekhitharistes, 205 p.
- Sampanis K. (2017), The interplay between the future and the subjunctive mood in the diachrony of the Greek language // Lambert F., Allan R., Markopoulos Th. (eds.), *The Greek Future and its History / Le futur grec et son histoire. Bibliothèque des cahiers de linguistique de Louvain, 139*, Louvain-la-Neuve: Peeters, 237-251 pp.
- Schmitt R. (2007), *Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen*, 2., durchgesehene Auflage, Innsbruck: Institut für Sprachen und Literaturen der Universität Innsbruck, 253 S.
- Wallace D. B. (1996), *Greek Grammar Beyond the Basics*, Grand Rapids, Michigan: Zondervan Publishing House, 1996, 797 p.
- Wallace D. B. (2000), *The Basics of New Testament Syntax*, Grand Rapids, Michigan: Zondervan, 2000, 336 p.
- Джаукян Г. Б. (1982), *Сравнительная грамматика армянского языка*, Ереван, Издательство АН Армянской ССР, 274 с.

References

- Abeghyan M. (1974), Yerker, h. Z, Ye., hrat. HSSH GA, 848 ej. (In Armenian)
- Abrahamyan A. (1976), Grabari dzeṛnark, Ye., hrat. "Luys", 558 ej. (In Armenian)
- Acharṙyan H. (1959), Liakatar k'erakanut'yun hayots' lezvi, h. IV, girk' A, Ye., hrat. HSSH GA, 594 ej. (In Armenian)
- Avetisyan H. (1985), Grabari storadasakan yeghanakë yev nra ëmbrnumë hay k'erakanut'yan patmut'yan mej, "Banber Yerevani hamalsarani", Ye., N 1, 193-204 ej. (In Armenian)
- Avetyan S. (2015), Anglereni zhamanakayin haraberakts'ut'yan kargi yev hayereni voh' iradrakan zhamanaki (yent'a-)kargi zugadrakan k'nnut'yun, "Banber Yerevani hamalsarani", Ye., N 1 (16), 38-40 ej. (In Armenian)
- Avetyan S. (2022), Ardi arevelahayereni k(ə)- apar'ni yev -u apar'ni imastagortsarut'ayin p'okh haraberut'yan harts'i shurj, "Banber Yerevani hamalsarani. Banasirut'yun", Ye., N 2, 22-35 ej. (In Armenian)
- Awetik'ean G., (1815), K'erakanut'iwn haykakan, Venetik, hrat. S. Ghazar, 580 ej. (In Armenian)
- Bagratuni A., (1852), Hayerën k'erakanut'iwn i pëts zargats'elots', Venetik, hrat. S. Ghazar, 744 ej. (In Armenian)
- Dahl Ö. (1985), *Tense and Aspect Systems*, Oxford: Basil Blackwell, 213 p.
- Dzhahukyan G. B. (1982), *Sravnitel'naya grammatika armjanskogo jazyka*, Yerevan, Izdatel'stvo AN SSR, 274 s. (In Russian)
- Garagashean A. M. (1876), Gortsnakan k'erakanut'iwn hay lezui, K. Pölis, hrat. Y. Gavafean, 248 ej. (In Armenian)
- Godel R. (1975), *An Introduction to the Study of Classical Armenian*, Wiesbaden: Dr. Ludwig Reichert Verlag, 139 p.
- Khach'atryan L., T'osunyan G. (2004), Grabari dasagir', Ye., "Zangak-97", 384 ej. (In Armenian)
- Hambardzumyan V. (2018), Grabari dzeṛnark, Ye., "Edit' Print", 436 ej. (In Armenian)
- Hilpert M. (2008), *Germanic Future Constructions: A usage-based approach to language change*, Amsterdam/Philadelphia: John Benjamins Publishing Company, 205 p.
- Hovhannisyan L. (1975), Dasakan grabari bayakan zhamanakneri kiraṙut'yunë, "Lezvi yev vochi harts'er", pr. III, Yer., hrat. HSSH GA, 252-319 ej. (In Armenian)
- Jensen H. (1959), *Altarmenische Grammatik*, Heidelberg: Carl Winter. Univeritätsverlag, 224 S.

**Karst J. (1901)**, Historische Grammatik des Kilikisch-Armenischen, Strassburg: Verlag Von Karl J. Trübner, 444 S.

**Lyons J. (1977)**, Semantics, Vol. 2, Cambridge: Cambridge University Press, 897 p.

**Meillet A. (1913)**, Altarmenisches Elementarbuch, Heidelberg: Carl Winters Univeritätsbuchhandlung, 212 S.

**Meillet A. (1936)**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, 2<sup>nd</sup>e éd., Vienne: Imprimerie des PP. Mekhitharistes, 205 p.

**Sampanis K. (2017)**, The interplay between the future and the subjunctive mood in the diachrony of the Greek language // **Lambert F., Allan R., Markopoulos Th.** (eds.), The Greek Future and its History / Le futur grec et son histoire. *Bibliothèque des cahiers de linguistique de Louvain*, 139, Louvain-la-Neuve: Peeters, 237-251 pp.

**Schmitt R. (2007)**, Grammatik des Klassisch-Armenischen mit sprachvergleichenden Erläuterungen, 2., durchgesehene Auflage, Innsbruck: Institut für Sprachen und Literaturen der Universität Innsbruck, 253 S.

**Wallace D. B. (1996)**, Greek Grammar Beyond the Basics, Grand Rapids, Michigan: Zondervan Publishing House, 1996, 797 p.

**Wallace D. B. (2000)**, The Basics of New Testament Syntax, Grand Rapids, Michigan: Zondervan, 2000, 336 p.